

Ենի-Չերի Աղասին (Ահմէտ) լսելով Աւտայի գալը, նորա առաջ կը գայ դիմաւորելու:

Աւտայ անպատրաստ կը գտնէ Ահմէտը, յանկարծ Ատապաղի վերան կը յարձակի, մեծ ու փոքր կը սպաննէ, ինչ որ Ահմէտ Տութաղայ գլխին արած էր, Ավտայ իսկապէս նոյնը կանէ Ատապաղի դիւին:

Ահմէտ միայն այս կոտորածէն ազատեցաւ, նա իւր սրնթաց ձիով փախաւ հասաւ ծովեզրն ու մտաւ ջուրն, նորա նժոյգն լողալու վարժ էր, գնաց խորն, զիշերն ևս վերայ հասաւ, դուրս գալով ջրէ՝ փախաւ, ազատեցաւ:

Աւտայ յաղթանակաւ դարձաւ Մահմուտ փաշի մօտ, փաշան դարձեալ նորան իւր իշխանութեան բարձրացոյց, իսկ Մէհմէտ որ Աւտայի հետ բանտարկուած էր, ի մահ մասնեց: Այս Մէհմէտը Հայտարցի ցեղին կը պատկանէր:

## Մասնաւոր տեղեկութիւն Լնդաբ գտնուող Քուրդ<sup>1</sup> ցեղերու վերայ

### Մ Ա Ն Ք Յ Ի Ք

Մանքցի մի կը պատմէր թէ ի նախնիս իւրեանց բնակութիւնը Մակու<sup>2</sup> եղած է, և թէ հայ էին, Սուլթան Պայազլիտի միջոցին Պայազլիտ եկած ու թուրքա-

1. Հայաստանի մէջ ամենէ բազմաքանակ քորութիւն բազրեւանդ է:

2. Մակու Պայազլիտի եւ աւատառի յարեւելս (քիչ հարաւախառն) մի գիւղաքաղաք է, ունի ընդարձակ վիճակ 5—600 պարսկաքանակ եւ 4 հայ գիւղերով, որք կը տարածուին յարեւելս յափոնն Երասխայ երկու ատր ծանապարհ, ի հարաւայ մինչեւ Խոյ (Հեթ), Թեմուր խանի իշխանութեան ներքոյ: Աստի կանցնի Տղմուտ, յարեւելս կը ճոսի եւ կը խառնուի Երասխայ մօտ նախավկայի վանքի: